

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրության մէջ.
Երբ հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլեֆոն № 258.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ.
(բացի կիրակի եւ առաջօրեայ).
Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խմբագրութիւնը առաւօտեան 10 կոպէկով.
Տէլեֆոն № 258.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Երեւանի ընտրութիւնները.—ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ.—Երեւանի քաղաքային ընտրու-
թիւնները. Նամակ Երեւան. Նամակ Երեւան.
Երեւան. Նամակ Երեւան. Նամակ Երեւան.
—ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. 4. Գօլթ ԼԵ-
քաղաքային. Նամակ Գարսիստանից. Արտաքին
ընտրութիւն. ՆԱՄԱԿ ԳՐԻԳՈՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի նոր պէտք.

ԵՐԵՎԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ներքին. Համարում տպված երեւանեան
թղթակցութիւնից մեր ընթերցողները կը
տեղեկանան, որ երկրորդ ընտրական ժո-
ղովը անցել է չորրորդին անաշուղ և 72
ձայնաւորք փոխադրէն ընտրվել են միայն 31
անձ: Այդպիսով ապագայ դումայի կազմի
միայն փոքրագոյնն ստան է ընտրված քա-
ղաքի ժողովրդի կողմից, իսկ մեծագոյնը
պէտք է նշանակվի նահանգական իշխա-
նութեան կողմից:

Ահա այն տխուր հետեւանքները, որոնք
առաջ եկան անմիտ և անգաղափարական
հակառակութիւնների շնորհիւ: Զը կային
սկզբունքներ, որոնցով ընտրողները զեկա-
վարվէին, չը կային ծրագրեր, որոնք
հիմք ծառայէին ընտրողների համարմա-
րումների համար: Սկզբունքը և ծրագրերը
գէն էին չարտվել, իսկ նրանց տեղը բռնել
էին մանր-մունր հաշիւներ, անհասկան
գիտումներ, իսկանք, նեղ կրքեր և մի-
միայն ջնջելու ձգտումներ: Զը կային
միայնակ և հակառակութիւն անաշուղ բե-
րող հայեցակէտեր: Հետեւանքը դուրս ե-
կաւ այնքան մանր-մունր, որ անհասկանա-

Երեւանի ընտրողները չը լսեցին խելացի
խորհրդատուներին, ականջ չը դրին մա-
ռուլի արտաբանող ձայնին և այժմ վայել-
լում են իրանց սխալների արդիւնքը:
Նրանք կոչված էին քաղաքին ձայնաւորներ
առաւ, իսկ նրանք այնպիսի անմիտ հա-
կառակութիւնների մէջ ընկան, որ վերջ ի
վերջ, միմեանց ջնջեցին և իրանց ձայնը
անհայտ լին և չըբացին:

Ընտրողների առաջ դրված էր լուրջ
հարց լուծման համար, իսկ նրանք այդ
հարցը դէպ չըլուծեցին ասպարէզից և այդ-
պիսով վերապահեցին նրա լուծումը ուրիշ
ատենին, ուշիւ հեղինակութիւնների բա-
րեւոյնցով իրենց համար: Իսկ ինքնաշնչ-
լուծում է, ինքստապաստութիւն, ինքնակե-
լութիւն, որ ցւոյց է տալիս գործելու ան-
ընդունակութիւն և ինքնապարտութիւնից

խելացի կերպով օգտվելու անկարողութիւն:
Երեւանի ընտրողական պայքարի բացա-
նական արդիւնքը մի տխուր էջ է մեր հա-
սարակական գործունէութեան մէջ, որը
միայն մի ուսանելի կողմ ունի, այն է, որ
նա կարող է թէ մի դառն դաս լինել
երեւանցիների համար և թէ մի խրատա-
կան նմուշ միւս տեղերի համար: Բայց
միթէ՞ դժուար էր նախատեսել այդ ան-
միտութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ԳԱՂԱՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

III

«Բարը բոլոր թայը դրինք», ահա այն իմաս-
տուն ժողովրդական առածը, որով երեւել է
ընտրողի այսօր, հոկտեմբերի 6-ին, տեղի ու-
նեցած քաղաքային իրաւասունների լրացուցիչ
ընտրութեան հետեւանքը:

Նախ պարզենք մի թիւրմիտութիւն, որի
հիման վրա մենք մեր անցեալ թղթակցութեան
մէջ յայտնեցինք, որ իրեւ թէ սենատի մի
բացատրութեան հիման վրա նահանգական վար-
չութիւնը թոյլ տուցէ երկրորդ քուէարկու-
թիւն այն անձանց վերաբերմամբ, որոնք, առա-
ջին ընտրութեան ժամանակ կէտից պակաս
թուով ձայներ ստանալով, համարվեցին չընտ-
րվածներ: Ինչպէս պարզվեց այսօր, այդպիսի
թույլտուութիւն նահանգական վարչութեան կող-
մից չէ եղել, այլ նահանգապետի յայտնած մի-
կարծիքը քաղաքային պաշտօնակատարին ա-
ռիթ էր տուել այդպիսի եզրակացութիւն ա-
նելու: Քաղաքային վարչութիւնը մի կողմից դի-
մելով Թիֆլիսի քաղաքային վարչութեան այդ
հարցի առիթով և մինչեւ այսօր պատասխան
չունենալով, եւ միւս կողմից առաջնորդվելով
քաղաքային կեանքադրութեամբ, հետաւոր չը
համարեց նորից դնել քուէարկութեան այն ան-
ձանց համար, որոնք մի անգամ արդէն սեւա-
ցել էին Քաղաքային վարչութեան այս որո-
շումը: Թէ որքան արդարացի էր, ի նկատի ու-
նենալով սենատի բացատրութիւնը և Թիֆլի-
սի օրինակը այդ բացատրութեան գործութեամբ
անաշուղտութիւն լինողում, չը գիտենք: Նոյն իսկ
հասկանալի չեղաւ՝ այդ արդիւնքը քաղաքային
վարչութեան կողմից էր, թէ նահանգական
վարչութեան կողմից, որովհետեւ այդպէս էլ
պնդողներ կային, թէ սենատի այդ բացատրու-
թիւնը Երեւանում գործադրել չէր կարելի,
որովհետեւ մեզանում ընտրողական միմիայն
մի չըլուծեալ գոյութիւն ունէր. այս բոլորը կըր-
նում ենք պարզ հասկանալի չեղաւ: Սակայն

աչքի առաջ ունենալով այս վերջին շարաւիղայ
ընթացքում տեսած դարձածը եւ այսօրվայ
ընտրողական երկրորդ փուլը, հաստատապէս
կասեցնք, որ հարցը ինչ կերպ էլ զրկած լինէր
եւ սենատի բացատրութիւնը ինչ կերպ էլ յա-
մարեցրած լինէր մեր քաղաքի ընտրողական
այս երկրորդ խնդրին, այնու ամենայնիւ մենք
հետեւանք չէինք հասնի եւ ակամատես պի-
տի լինէինք, թէ ինչպէս քաղաքի շահերին հա-
մապատասխան շատ արժանաւոր մարդիկ երկ-
րորդ անգամ սեւանում էին: Այսպէս էր դրու-
թիւնը Ահա ձեզ նրա հայեցիւն:

800 ընտրողներից այսօր մասնակցում էին
ընդամենը 299. այլ խօսքով աւելի քիչ թուով,
քան առաջին անգամ: Այդքան ընտրողներից
հայեր 202 հոգի էին եւ թուրքեր միմիայն 97.
Դրոված էին 38 տուփեր ընդամենը. իսկ պիտի
ընտրէին 46 հոգի: Նայելով հայ եւ թուրք ընտ-
րողների թւերին, տեսնում ենք, որ գերակշիռ
ձայնը հայերի կողմն է, հետեւապէս ծայրահեղ
դէպքում էլ հայերից մեծամասնութիւն պիտի
ընտրվի. սակայն, ով դարմանք, ընտրութիւնը
տուեց 4 թուրք 1) Միր Բաղդ 2) Բաբաբեկ,
3) Զանգեր Բէկ 4) Հասան Բէկով: 3) Մահմէդ
Կուլի Բէկ Գեարիմ Սուլթանի 4) Հալի Արդի
Աղաբէկ օղլի, մէկ առաւ բոլոր—Ուրազով, ըն-
դամենը 5 ընտրվածներ եւ ոչ մի հայ: Ուրեմն
այս անգամն էլ 38 քուէարկվողներից սեւա-
ցան 33-ը:

Երեւակայում էք աւելի խայտառակ երե-
ւոյթ, քան Երեւանի հասարակութեան մէջ
անդի ունեցողը: Երեւակայում էք գիտակցու-
թիւնից զուրկ, անձնական հաշիւներից կուրա-
ցած, կրքեր, քէն եւ խաբութեան գերի դարձած
մի հասարակութիւն, քան Երեւանիս: Ասեմք,
հազար ամօթ...

Առաջին ընտրութեանը 120 քուէարկվողնե-
րից 72 տեղի համար ընտրվեցին հայեր 26 հո-
գի, իսկ 94 հոգու.—որոնց—թուով թիւշներ,
փաստաբաններ, ճարտարապետ եւ իրանելի-
գէտ ու երիտասարդ մարդիկ,—սեւացնելով,
իրանց տեսութեամբ եւ կարճամտութեամբ
ստեղծեցին մի դրութիւն, որով շատ արժանա-
ւորներ ընտրվին դուրս մնացին, իսկ լրացուցիչ
ընտրութեան ժամանակ զրկված տուփերը մեն
մասամբ այնպիսի մարդկանց էին պատկանում,
որոնց, ձայնաւորութեան անարժան համարելով,
սեւ քուէ տալը մի ընական հետեւողութիւն
պէտք էր համարել այսպիսի պայմաններում:
Այն ինչ նախ թուրք ընտրողները, շարունակելով
իրանց թափած սկզբունքը ընտրած ընթացքը,
անխտիր օրպատակ տուեցին թուրքերին եւ սեւ
հայերին—արժանաւորին թէ անարժանին: Իսկ
հայերի մի մասը թուրքերին ձեռք ձեռքի առ-

նոցում, մի օր Հերմիտային այցելութեան է
գալիս նրա գիմնադրական դասնկերութիւններից
մինը, օրիորդ Աննա Ալիմբաբեանը, որ պատ-
մուէ է, թէ ինչ իդէալներ ունի. նա մտադիր
է զնայ մտնել կանանց բարձր բժշկական կուր-
սերը եւ աւարտելով ուսումը գնալ Պարսկաս-
տան ու մտնել Շահի հարեմխանան բժշկուհի:
Նրա հետ եկել է եւ նրա եղբայր, երիտասարդ,
մօտ 30 տարեկան, Ռուբէն Ալիմբաբեանը,
ճարտարապետ, որ երկուր ժամանակ ապրել է
Եւրոպայում եւ չէ ընտրողացել ոչ մի տեղ
գտնել այն իդէալը, որ նա 18 տարեկանից
սկսած ստեղծել է իր մաքի մէջ կնոջ վերա-
բերմամբ. դուրս է գալիս, որ այդ 30 տարե-
կան երիտասարդը մնացել է կոյս եւ թէեւ
ճարտարապետ է, բայց ճարտարապետութիւնը
օրրում է միայն գեղարուեստի եւ ոչ կանանք
մէջ գործադրելու համար:

Ռուբէն Ալիմբաբեանի երեւակայով, Բէգմու-
րեան ամուսինների ընտանեկան խաղաղու-
թիւնը եւ երջանկութիւնը խանգարվում է:
Ռուբէնը գտնում է Հերմիտայի մէջ այն իդէա-
լը, որ ամբողջ 12 տարի որոնում էր, իսկ
Հերմիտայ վերջապէս հասկանում է, որ իր
ամուսինը պրօպայի է, ինքը նրան չէ օրրում,
ֆիզիքական զգուշակ է զգուշ հոգի ամուսի-
նը: Հերմիտայ գալիս է եւ այն եզրակացու-

ւած, մի կողմ դրած անհատական արժանաւո-
րութիւնը, առաջնորդվում էր մի բանով. լաւ
լինի թէ վատ, արժանաւոր թէ անարժան ընտ-
րելին, ընտրել նրան, ով հակառակ է ներկայ
քաղաքացիին, իսկ ներկայ քաղաքացին անպայման
հակառակ էին բոլոր թուրքերի: Կարծեմ, պարզ է,
թէ ինչու բոլոր հայերը սեւանալով չորս թուրքեր
ընտրվեցին, չէ որ դրանք կէտից աւելի ձայներ
չանած լինելու համար պիտի ստանային, բացի
97 թուրք ընտրողներից, ամենաքիչը մի 50—
60 հայ սպիտակ քուէն: Ահա այն 50—60
հայ ընտրողները, իրանց գոյած նպատակին
հասնելու համար, չուզեցին խնայել ոչ մի
ընդհանուր շահ, ոչ մի անարատ զգացումներ:

Յեւայցէք, երեւանցիներ, ձեր առաջնոր
մարդկանցով, ձեր կեղծ օրտաշաւ բարեկամնե-
րով, որոնց բողոք լեզուից թոյն էր կաթում
ձեզ համար: Արդեաք հաւակացած այժմ ձեր
չարն ու բարին: Արդեաք բաւական եղան այս
երկու դատը փորձերը խելիք գալու համար:

72 տեղի համար ընտրվեցին ընդամենը 31
հոգի. նահանգական վարչութիւնը ինքը պիտի
լրացնէ պակաս թիւը ուսով ցանկանայ, թէ ոչ-
քեւ կը լինեն դրանք, յայտնի չէ. մի կողմ
թողնենք նոյն իսկ այն երեւոյթը, որ անկա-
րող լինելով մեզ տուած իրաւունքից օգտվել,
մեր քուէով մեր քաղաքի կազմը որոշել, ստի-
պեցինք նահանգական վարչութեան նշանակել
մեզ համար ձայնաւորներ. ընդունենք նոյն իսկ,
որ նահանգական վարչութեան նշանակած ան-
ձանց մեծամասնութիւնը քաղաքի շահերին
նուիրված մարդիկ կը լինեն, ընտրեալների մինչեւ
այժմեան կազմը մի նկատի առնելով՝ այժմեա-
նից այս կասեց, որ եթէ միւս խնդիրները
փոփոխութեան չենթարկվին, անշուշտ ջրի՝
մեր քաղաքի համար այս անպատեղելի հարցը
կարող է պատահարների հանդիպել: Եւսմանայն
դէպս նա ազատ չի լինի դանդաղումներից եւ
ով գիտէ թէ ինչ փորձանքներ գտն նրա գըր-
լին: Ահա այս փորձանքները տանջում է
չառերին այժմեանից:

Ա.—Դօ

ՆԱՄԱԿ ԾՈՒՇՈՒՑ

Հոկտեմբերի 8-ին

Իրիակի, սեպտեմբերի 29-ին, թեմական
դպրոցի դահլիճում, ի պատիւ Վեհափառ Կաթո-
ղիկոսի օծման տարեդարձի, նշանակված էր զըպ-
րոցական հանգէս, ուր պէտք է կարդացվէր ի
միջի այլոց եւ դպրոցի տարեկան հաշիւը: Դահ-
լիճը համարեալ թէ լինէր էր երկու սեռի հասա-
րակութեամբ. կային ամեն կարգի մարդիկ,
ներկայ էին հոգաբարձուներից միայն երկուսը...

Թեման, որ նա աւելի օրրում է գեղեց-
կութիւնը յանցանքի մէջ, քան տգե-
ղութիւնը առաւելութեան մէջ: Եւ
անա այդ ձեւակերպութեան մէջ է կայանում
Հերմիտայի ամբողջ աշխարհայեացքը, որ
ներշնչել է նրա մէջ Ռուբէնը: Ռուբէնն եւս
ամեն կերպ աշխատում է համոզել նրան,
որ նրա ամուսինն անարժան է նրան, որ նա
ստեղծված է բանաստեղծական եւ գեղա-
րուեստական կեանքի համար: Ռուբէնի ջոյն
եւս յորդորում է Հերմիտային բողոքաւորացնել
իր եղբորը: Աննան Բէգմուրեանը, տեսնելով
իր ընտանեկան երջանկութիւնը խանգարված,
հասկանալով անցածը, սաստիկ խանդաւորվում
է զգուշ, եւ այդ խանդաւորվելից զրգոված
սկսում է կոպիտ վարվել կնոջ հետ, նայն իսկ
երկու անգամ խփում է նրան: Եւ համոզում է,
աղաչում է, սպառնում է կնոջը խելիք գալ,
յիշել որ մայր է, զաւակներ ունի: Նոյն իսկ
Հերմիտայի մայրը, Նատալիան, չէ կարողա-
նում աղբիւ աղվայ վրա, իսկ հայրը, Սօրոմոն
Սուրաթեանը, շատ բնական է գտնում իր աղ-
կայ ցանկութիւնը բաժանվել ամուսնուց:
Բէգմուրեանի մի մտերիմ բարեկամը, Լիւիս
Մարմարեան, ընդմտաբովմով հիւանդ մի մարդ,
նոյնպէս համակրում է Հերմիտային եւ յան-
դիմանում է իր բարեկամին, որ նա ամուսնա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՆՈՐ ՊԵՏ

Ունէր իր արուեստը. դրամա 4 գործողութեամբ,
հեղինակութիւն պ. Շիրվանզադէի:

Երկուշաբթի. հոկտեմբերի 7-ին, հայոց դրա-
մաշարական ընկերութեան խումբը, հայոց
վեցերորդ ներկայացմամբ խաղաց պ. Շիրվան-
զադէի «Ունէր իր արուեստը» նոր դրաման:

Պիեսայի նորութիւնը գրաւել էր թատրոն
հասարակութեան մեծ բազմութիւն: Թատրոնի
վարչութիւնն եւս աշխատել էր իր կողմից ա-
ւելի մեծ թուով բազմութիւն գրաւել, կիսա-
գնով առնով օրեկանները աշակերտներին:

Նոր դրամայի բովանդակութիւնը հետե-
ւայն է:

Հարուստ կալուածատէր Անտոն Բէգմուրեան
վեց տարի առաջ, 38 տարեկան հասակում, ա-
մուսնանում է 18 տարեկան, կրթված օրիորդ
Հերմիտայ Սուրաթեանի հետ: Օրիորդը ամուս-
նանալիս ոչ մի տէր չէր զգում զէպի իր ազա-
նայ ամուսինը. նա գնաց նրան մարդու, որով-
հետեւ ծնողները ցանկանում էին, թէեւ չէին

Հանդիսակցները մեծ մասը, մասնաւորապէս տի-
կիները եւ օրիորդները, եկել էին հասարակ
հետաքրքրութիւնից ստիպմամբ եւ մի քիչ էլ
իրանց ցոյց տալու համար Կային եւ այնպիսի
սինները, որոնք նախաձեռնողները լինելով ամեն
մի ազգային գործի, եկել էին տեսնելու, թէ
ինչ է արված ամբողջ ուսումնական տարվայ
ընթացքում:

Այսպէս կատեմ, որ հանդէսի ծրագիրը կազմ-
ված էր շատ ազատ. հանդէսը սկսվեց «պահ-
պանիչ»-ով, քառասուն խումբը երգեց, յետոյ
ամբիօն բարձրացաւ Բենիկ վարդապետը եւ
սկսեց իրան յատուկ ժեստերով եւ դէկլամա-
ցիայով ճառախօսել:

Ինչեք ասէք չանց նա. այստեղ կային եւ-
տակաւորութիւն, ինքնագոյութիւն, նախափնը,
բամբասանք, զուր յոյսեր, ցնորքներ եւ չնդած
բաներ, առաւել եւս «նոր»,—մենք արեւնք, մենք
էինք, մենք չը լինէինք այսպէս կը լինէր, այն-
պէս չէր լինի եւ այն եւ այն Նախ եւ անալ
նա մէջ բերաւ նախկին տեսութիւններ արածը,
իր տեսլով՝ քանդածը, իբր թէ նրանք դպրոցը
դէպի անդունդն էին տանում եւ թէ՛ եթէ ին-
քը չը լինէր՝ այսօր դպրոցի գերեզմանի վրա
ծաղիկներ կը ցանէինք: Ինչպէս Գրիստոս եկաւ
այնպէս եւ որոնի արմատաւոր արաւ արտից ու
նրա տեղը ցորեն ցանեց, այնպէս էլ ինքը հայր
տեսնելով, գալով Լարարադի թեմական դպրոցը,
հետաքրքրեց որոնները, նրանց տեղ նշանակեց իր
բէժմի մարդկանց, պարզ ասած՝ Բենիկը հե-
տաքրեց համարաբարական ուսուցիչներին եւ
տեղը դրեց ճեմարանականներին: Հայր սուրբն
էլ գովասանական խօսք չը մնաց, որ չը չապ-
լէր իր պաշտօնակիցներ արժանաւորութիւն-
ների մասին: Հասարակութեան աչքին թող
փեցու համար՝ նա միայն համարաբարականութիւն
եղած երկուսի անունները տուեց, զանազան
ածականներ կ'ընկերով. չը գիտեմ, ինչ որ մէ-
կը Պարիզի ինքնագործական թէ ինչ համարաբար-
ական է վերջացրել եւ յետ այնորիկ եկել Գեր-
մանիա, այստեղի համարաբարականներն էլ է տե-
սել եւ մի ինչ որ ընկերութեան անդամ գրվե-
լով՝ եկել հայր սուրբի փէշից կ'ընկ. միւսին էլ
տարաւ. Պարիզ, այնտեղից հանեց բերաւ Եւրո-
պայով, անցկացրեց Կովկաս, ուր նա չը հաւա-
նեց թիֆլիսը եւ միւս մեծ քաղաքները, այլ
գիւմրի էլ ինչ հայր սուրբին. երրորդն էլ ի
պարծանաւ հայր սուրբի, աւարտած է, ինչպէս
եւ ինքը... ուսաց համարաբարական, լսեցէք, ու-
նի կուրծքից կ'ընկնէր համարաբարական նշան:
Ել ինչ կուգէք, 12 ուսուցիչներից 3-ը իբր թէ
համարաբարական. ահա փայտե խումբ, գո-
վասանքի արժանի խումբ, իսկ միւսները ու-
մանք ճեմարանը վերջացրած եւ ուսանք Ներ-
սիստան ու նոյնանման միջնակարգ դպրոցներ:

Այժմ շարունակենք հետեւել հանդիսի ծրա-
գրին: Հայր սուրբի ճառը երկար տեսեց, նա
խօսեց, ինչպէս եւ միշտ, շատ խօսեց, ոտա-
նաւոր էլ մէջը կոխեց:

Եւ ահա Բենիկ վարդապետը ճառում է եւ
գործի մասին: Դպրոցի վառարանները կարգի
բերվեցին՝ ծախս, զանիւծը զարգարվեց՝ ծախս,
գնացի իշխանին կարեւոր գործերով... ծախս,
եկայ իշխանին՝ ծախս, գնացի Նուխու գա-
ւառը կարեւոր գործերով՝ ծախս, եկայ այնտե-
ղից՝ ծախս, տպարանը անկարգ դրութիւնից

ցաւ 18 տարեկան աղջկայ հետ 38 տարեկան
հասակում լոկ ետաւորութիւնից դուրս՝ գե-
ղեցիկ եւ ջանք ինչ ունենալու ցանկութեամբ
Բեգումները մի րոպէ մտածում է նոյն իսկ
ազատ թողնել կնոջը, արձակել նրան, բայց զա-
ւակները, պատուի միտքը թող չէ տալիս նը-
րան: Եւ կինը, Հերթիւն, ուշադրութիւն չը
դարձնելով մայրական պարտաւորութիւնների
կոյնի, թողնում է ամուսնու տունը ու փախ-
չում Թուրքի Սիմաբարանի հետ, որա ջրով
ընկերակցութեամբ, գրելով ամուսնուն մի նա-
մակ, որի մէջ ասում է, թէ՛ այլ եւս ապրել
նրա հետ չէ կարող եւ իս ուստանալով մասն-
րաւ մասնութիւնները գրել ճանա-
պարհից: Եւ իմանալով այդ փախուստը,
Մուրաբանը գոչում է. «Ունէր իրա-
ւունքը, Դրանով էլ վերջանում է գրաման:

Ահա գրամանի մանրամասն ընկալակութիւնը,
որ նաեւ երկու խօսքով կարելի է ամփոփել
իր ազատ կամքով ու յօժարութեամբ ամուս-
նանալով մի կրթված, ազնիւ, բայց պրոգրիկ
մարդի հետ, վեց տարվայ ամուսնութիւնից եւ
զաւակներ ունենալուց յետոյ, կինը գալիս է
այն եզրակացութեամբ, որ ապրել այդ մարդի
հետ չէ կարող, որովհետեւ նրանց ճաշակները
միեւնոյն չեն, որ աւելի լաւ է գեղեցկութիւնը
սիրել յանցանքի մէջ, քան տեղեկութիւնը առա-
ջնութեան մէջ, որ ինքն՝ արդէն 25 տարեկան

կարգի բերի՝ ծախս, խանութ բաց արի՝ ծախս՝
բոլորը ծախս եւ ծախս: Բայց այս բոլորը կապ
ունէր արեւօք նրա տեսութեան հետ:

Ն—ս

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 20-ին

Կրօնուսուցիչների խնդրեր նոր չէ մեր հոգե-
ւորական գասի մէջ:

«Իրողի» արդարացի նկատողութիւնները եւ
մերկացումները դուր չեն եկի մեր կրօնուսուցիչ
հայրերին, ինչպէս արդէն լսելի է մասնաւոր
կերպով եւ ինչպէս դուրից պարզութեամբ
խոստովանում է ձեռագրեան քանակներ:

«Դու բարկանում ես, ուրեմն մեղաւոր ես»,
ասում է Մոլիերի հերոսներից մէկը:

Ճիշդ է, անցեալ տարի Վեհափառ Կաթողի-
կոսին գահաւանդել էին արված կրօնուսուցիչների
անբարեխիղճ վերաբերման վրա դէպի իրանց
ստանձնած արագան պաշտօնը: Եւ այդ գահա-
ւանդողներից մէկն էլ ես էի: Մէկ անգամ էլ
բժշկապետ Նուստարեանի հետ գնացինք Վե-
հափառի բողոքելու այս դրութեան դէմ: Եւ
այդ օրն էր, որ Վեհափառի ներկայացան Թիֆ-
լիսի քանաքանորէն եւ լսեցին նրա յանդիմա-
նանքը եւ հրամանը բարեխիղճ վերաբերվե-
լու դէպի կրօնի գահաւանդութիւնը պետական
դրոցներում: Կրօնուսուցիչները փորձեցին բա-
ցատրութիւններ տալ արդարացիներու համար
այն իրողութիւնը, որ կուրծք աւարտող գիւ-
նադիւստներն «Հայր մեր» չէ հասկանում հա-
յերեն: Սակայն քաջատրութիւնները բաւարար
չը թուացին տեղապահ Գաբրիէլ վարդապե-
տին, որ յայտնեց, թէ կրօնուսուցիչներից մի բա-
նիւր այնքան դասեր են «ճարտ» զանազան
դպրոցներում, որ անհնար է բարեխիղճ վերա-
բերումը Վեհափառ Կաթողիկոսը յորդորներ
կարգաց, յոյց տուեց քանաքանորէն իրանց
պաշտօնի վեհութիւնը, իրանց պատասխանա-
ւորութիւնը եւ այն... Բայց ով լսեց, որ կրօ-
նուսուցիչ հայրը իր դասերի թիւը պակեցրեց:

Այո, օրէնքի տառի դէմ հիմնվելով, կրօնու-
սուցիչ քանաքանորէն արդէն իրանց իրաւունք հա-
մարեն առաքելու, թէ իրանք կատարում են
իրանց պարտաւորութիւնները:

Բայց չէ, հայր կրօնուսուցիչներ, բացի պաշ-
տօնական պարտաւորութիւններից, որ ինչպէս
ձեռքով մարդիկ են գրել, կայ եւ մի ուրիշ
աւելի բարձր պարտաւորութիւն, որը ոչ մի
օրինական յօդուածի չէ կարելի վերածել, որով-
հետեւ նա բարձր է ամեն օրէնքներից,—դա
բարեխիղճութիւնն է: Ինչին պէտք է
կրօնուսուցիչը այդ նոր, ոչ մի ձեռքով
մտած յօդուածը:

Ահա թէ ինչ է ասում նա:

1) Ուսուցչութիւնը ամեն մարդու բան չէ:
2) Եթէ դասերը չափազանց են եւ դու «ֆի-
զիկապէս անկարող ես ամեն տեղ հասնել, ինչ-
պէս ասում է Գաբրիէլ վարդապետը, դասե-
րիդ թիւը պակեցրեց, կամ հեռացիր այդ
սրբափայլից եւ տեղ տուր աւելի կարողին:

3) Երբ դու քանաքանոր փարպէս հազար,
դու ուրք բարոյական պարտականութիւններ
ստանձնեցիր դէպի եկեղեցին, դէպի ժողովուր-
դը, դէպի կրօնը եւ ինչպէս Այս պարտակա-
նութիւններն էլ ոչ մի օրէնքագրութեան մէջ
չեն մտել:

Այս, կոն պարտքեր, որոնք ոչ մի օրէնքադ-
րութեան մէջ չեն մտել, նրանք գրված են ին-
քում առնաստաղի իւրաքանչիւր անհատի սրտի
տախտակի վրա:

Չեմ ուզում երկարացնել

Իմ կարծիքով, ոչ մի արդարացում ու հեր-
քում չի բժշկի մեր վէճերը, հարկաւոր է լուրջ

կին՝ աւելի երջանիկ կը լինի 30 տարեկան գե-
ղեցիկ եւ կոյս մնացած երիտասարդի հետ, եւ
այդ եղբակցութեան հիման վրա, նա թող-
նում է ամուսնուն, երեխաներին, ոտնակոխ է
անում ամուսնական, մայրական պարտաւորու-
թիւնները ու փախչում իր արած երիտասարդի
հետ: Եւ հեղինակը հարցնում է «ուսն էր
իրաւունք», թէ՛ եւ դրամայի ամբողջ ընթաց-
քում աշխատելով ստեղծել Հերթիւնայից եւ
Թուրքիէից համակրելի տիպեր՝ երեւում է, որ
նա արդէն ինքն իր համար լուծել է այդ հարցը
եւ գտնում է, որ նա ունի իրաւունքը:

Դրաման բեմական, աքտաւոր կողմից ունի
արժանաւորութիւններ, լաւ տեսարաններ, լուս-
նակ գիշեր, ճոխ անտառ, ծաղիկներ, երա-
ժշտութիւն, տեղական շուկ, շքեղ ամառանոց,
մի խօսքով լաւ ակնհասարկներ,—դրանք բոլորը
որոշ տպավորութիւն կարող են գործել եւ
գործում են: Սակայն նրանք բովանդակութեան
կողմից, իբրեւ մի գրական-հասարակական
գործ, Երթնայից նոր գրաման ոչ միայն
զուրկ է բարոյական որ եւ է հիմունքից, ոչ
միայն չունի գաղափարական որ եւ է արժէք,
ոչ միայն մեղմանում է հոգեբանութեան տար-
րական պահանջների դէմ, այլ մի կատարեալ
գեղարվեստական գործ է, զուրկ սոցիալ-բա-
րոյական որ եւ է հիմքից, զուրկ հասա-
րակական որ եւ է իդէալից: Եւ այդ պատ-

վերաբերմունք դէպի կրօնի դասաւորութեան
խնդիր:

Մեզ համար ի հարկէ նշանակութիւն չունի
այն կամ այն անձաւորութիւնը, խնդիրը սկզբ-
ունքին է վերաբերում: Անպապաղ լուծումն է
հարկաւոր:

Վ. Արծրունի

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Ախալքալաք, հոկտեմբերի 1-ին

«Մշակ»-ի 208 համարում Ախալքալաքի տը-
պագրված լուրի մէջ ասված է, որ ս. Փրկիչ
եկեղեցու նորոգողը երեցիօս Ստեփանուր Զին-
կարեանը ընտրված է պատգամաւորների 9
ձայնով, ընդդէմ միւս պատգամաւորների 21
ձայնի:

Թերիմացութեան տառաջն առնելու համար
բարեհաճեցէք, խնդրեմ, տպագրել երկուսդ՝
ճշմարտութիւնը պարզ կազուցանելու յարգելի
նիւթերը: Յունիսի 30-ին կայացած բազ-
մամարդ ժողովով ընտրվեցին 30 պատգամաւոր-
ներ, որպէս զի վերջիններս առանձին ժողովներ
ունենալով՝ ընտրին արժանաւոր երեցիօս ս.
Փրկիչ եկեղեցու համար Ապա օգոստոսի 25-ին
նոյն բազմամարդ ժողովը հետագային էլ այդ 30
պատգամաւորներից 8 հոգու. թէ՛ դրանց հե-
ռացնելու պատճառը եւ թէ՛ մինչեւ այդ ժա-
մանակ երեցիօս չընտրելու պատճառը մասն-
րաւան յայտնի է ընթերցողներին «Մշակ»-ի
194-րդ համարում տպագրված «Միակամ»-ի
նամակից: Սեպտեմբերի 3-ին ժողովի եմ հրա-
ւիրել մնացած 22 պատգամաւորներին, որոնցից
ժողովի եկել են 16 հոգի: Ժողովը կանոնաւոր
համարելով՝ բաց եմ արել 16 պատգամաւորով
Դաւիթը՝ ընտրելութեամբ ընտրելով եւս
երկու հոգի, որոնցից պ. Զինկարեանը 9 սպի-
տակ ընտրվել է երեցիօս թուանշան-
ները ցոյց են տալիս, որ ընտրութիւնը շատ
կանոնաւոր է, այլ կերպ՝ նախ ինքս այդպիսի
մի անկանոն ընտրութիւն չէի ներկայացնի վի-
ճակային կանխատեսարանի ի հաստատութիւն,
եւ երկրորդ կանխատեսարանն առանց գործի կա-
նոնաւորութիւնը ի նկատի առնելով՝ չէր հաս-
տատի նորոգող երեցիօսին: Պարզ եմ հա-
մարում յայտնել նաեւ, որ Թիֆլիս գնացել եմ
Նորին Վեհափառութեան ներկայանալու կա-
րեւոր գործերով եւ ոչ թէ աշխատելու երեց-
իօսի ընտրութիւնը:

Փոխանորդ Բաբգէն վարդապետ Աղաւելեանց
Ներքին Հիմնի

Կովկասեան Գեղարտեստական ընկերութեան
խորհուրդը գիտել է մօտ օրերումս կովկասեան
Կառավարչապետին՝ խնդրելով թող տալ ընկե-
րութեանը՝ խորհրդակցական ժողովներ կազմել
Գործում եւ Թելաւում տեղական գեղարտես-
տութեան կարիքների մասին՝ համաձայն առան-
ձին խորհրդակցութեան կազմած ծրագրի:

Ամուսնայութեան գործերը կոնսիստօրիա-
ների իրաւասութիւնից հանելու եւ քաղաքա-
ցիական դատարաններին յանձնելու հարցը
վճռված է դրական կերպով: Ամուսնայութեան
վէճերի դատական մասը այսուհետեւ կը ըննէ
նախագահական դատարանը, եւ ամուսնայութեան
թեան մասին դատարանի կայացրած վճիռ
հաստատութիւնից յետոյ միայն՝ այդ վէճերը
կը յանձնվեն սինօզի բարեհայեցողութեան:

«Новое Обозрѣніе» լրագրին գրում են Երե-

ւանով այն տիպերը, որ նա կամեցել է դուրս
բերել իբրեւ համակրելի, իդէալական, դուրս
են եկել, ընդհակառակը, հակակրօնի. եւ այդ է
պատճառը. որ հանդիսատես հասարակութեան
անհոգի համակրութիւնը ոչ թէ դրամայի այդ
կենտրոնական անձաւորութիւնների, հերոս-
ների կողմն էր, այլ Անտօն Բեգում-Բախի կողմը,
որին, հեղինակը կամեցել է դուրս բերել իբրեւ
հակակրօնի տիպ: Եւ միթէ կարելի է համա-
կրել մի մարդի, որ առանց որ եւ է պատճառի,
նոյն իսկ առանց որ եւ է հասարակական
իդէալների ու ճշմարտիների, գաղիւն, մտնում է
ուրիշ ընտանիքը եւ աշխատում զանազան
սոփիստ դատողութիւններով գլխից հանել այդ
մարդի կնոջն ու փախչել նրան. միթէ կարելի
է համակրել այնպիսի մի տիպի, որ աշխա-
տում է մտնել կնոջ մէջ այն համոզմունքը,
թէ՛ աւելի լաւ է գեղեցկութիւնը յանցանքի
մէջ, քան տեղեկութիւնը առաջնութեան մէջ:
Եթէ այս կարծիքը ոչ թէ պ. Երթնայից գրեց
յայտնած լինէր, այլ նոյն իսկ մի նշանաւոր
փիլիսոփայ, դարձեալ միշտ կը մնար անբա-
րոյական կարծիք: Մենք չենք կարող ընա-
կան համարել այն վիճակը, երբ մի կին
կամեցնում է բաժանվել իր ամուսնուց, հերթի
վրա ձգել իր զաւակներին, լոկ այն պատճա-
ռով, որ, զիջելով, ամուսնից «փախ» սիրելու տեղ
«առջն» է սիրում, կամ ինքը կինը ձանձրացել

ւանից. «Լրատւանի էկզարտ Ալեքսի արեւելա-
կոսոսը պեղումների տեղից մեկնեց ուղղակի
դէպի Էլմիաձին՝ ճանապարհին կառքից դիտե-
լով այն հողաբաժինը, որ Էլմիաձին վաճառ
իր կալուածներից յատկացրել է առաջադան
եկեղեցու շինութեան համար: Վաղարշապատ
գիւղը մտնելիս՝ Վրաստանի էկզարտը այցելեց
այնտեղի առաջ եկեղեցին եւ ապա ուղեւոր-
վեց դէպի Էլմիաձին վաճառ, ուր վաճառի միա-
բանութիւնը՝ իր գլուխ ունենալով արեւելա-
կոսոսների, եպիսկոպոսների եւ վարդապետ-
ների՝ հանդիսաւոր ընդունելութիւն ցոյց տուեց
նրան: Էկզարտը, չըլլալաւ ընտրված բազմութիւն հո-
գեւորականներով, մտաւ Էլմիաձին տաճար
որտեղ աղօթեց սուրբ սեղանների առաջ եւ
ապա նայեց եկեղեցական զգեստների եւ ա-
նօթների թանգարանը: Ճառարից Էկզարտը գնաց
Վեհարան, ուր անյապաղ ընդունվեց Ամենայն
Հայոց Կաթողիկոսից: Երկու բարձրաստիճան
հոգեւորականները օրտապից կերպով ողջունե-
ցին միմեանց եւ փոխադարձ ուրախութիւն
յայտնեցին տեսակցութեան առիթով: Ստեփանու-
րեան մէջ՝ Նորին Վեհափառութեան հետ Էլմիա-
ձին մտնելու տպաւորութիւնների մասին՝ Էկզար-
տը յայտնեց իր գործունքը իմպիլ վարդապե-
տի աշխատանքի վերաբերմամբ ս. Գրիգորի, այդ
թէ՛ յունադաւան, թէ՛ հայադաւան եւ թէ՛ կա-
թօլիկ եկեղեցիների կողմից հաստատուած
յարգված՝ մեծ Հայաստանի Լուսաւորչի տա-
ճարի պեղումների գործում: Վրաստանի էկ-
զարտը, ի միջի այլոց, հաղորդեց Կաթողիկո-
սին իր մտադրութեան մասին Սրեւանում շին-
վող առաջադան եկեղեցու խորաններից մէկը
նուրիւր ս. Գրիգորի անուան եւ խնդրեց Նո-
րին Վեհափառութիւնից թող տալ Էլմիաձին
տաճարի սրբութիւններից՝ ս. Գրիգորի մա-
սանց մի կտորը տալ գեանդելու Սրեւանի առ-
ւաց մայր-եկեղեցում: Նորին Վեհափառու-
թիւնը ուրախութեամբ ընդունեց Էկզարտի
այդ ի Գրիգորս եղբայրական դիմումը եւ
յայտնեց իր լուրջ համաձայնութիւնը: Դրանից
յետոյ Նորին Վեհափառութիւնը հրաւիրեց Էկ-
զարտին, նախագահութիւն եւ միւսներին ճաշի
որ տեղի ունեցաւ կաթողիկոսական սենեակ-
ներում: Ճաշի ժամանակ Կաթողիկոսն եւ Էկ-
զարտը կենացներ փոխանակեցին: Ճաշից յե-
տոյ Էկզարտը այցելեց հոգեւոր ճեմարանը,
որի գահինում գիտաւորների նրան օրհնեցով
որ գեղեցիկ կերպով կատարեց ճեմարանի բազ-
մաթիւ երգեցիկ խումբը կուրտուս վայրագի-
տի առաջնորդութեամբ:

Մեզ կրկին խնդրում են բարեգործ անձանց
ուշադրութիւնը հրաւիրել Թաղեւ Թարութիւ-
նեան անունով մի հիւանդ ծերունու վրա, որը
զուրկ է ապրուստի որ եւ է միջոցից: Օգնու-
թիւնը խնդրում են ուղարկել ս. Սարգիս վա-
նահօրը՝ յանձնելու Թարութիւնեանցին:

ԴՂԱՐԻՑ մեզ գրում են. «Այս տարի գինի
լաւ գին կունենայ. այժմեանից արդէն 2 րոպի
2 ր. 20 կոպէկ են ուղում վեղորջին. բայց չէ
էլ կարելի պնդել, թէ՛ գները այդպէս բարձր
էլ կը մնան, դա կախված է գինու արտադ-
նութեան չափից, իսկ արտադնութիւնն էլ
կախված է ճանապարհների լաւ կամ վատ լի-
նանքից:

Եւ մենք կ'անգը. ոչ, պ. Երթնայից գրեց, ձեր
հերոսներն չունեն իրաւունք, իսկ պ. հեղի-
նակը չունեն նոյնպէս ոչ մի իրաւունք եւ բա-
րոյական հիմք կերակրելու հասարակութիւնը
դէկադենտական, բարոյական հիմունքներից եւ
հասարակական իդէալներից զուրկ մի արեւա-

Ն. Առաքելյան

Վիեննա Սալոնիկից հաղորդում են, թե հրոսակալների զլխաւոր ծանկով ձերբակալված է ոչ-յեղափոխական բոլորներէրց:

8 հոկտեմբերի
ՀՈՒՆՈՒՆ: Համայնքների ժողովում Կրանթորն Սոմալի երկրում ձեռնարկված գործողութիւնների առթիւ պատգ, թե զնդապետ Սվալնի զօրաբաժինը ուժեղացնելու համար կուղարկվեն մի հնդկական բաւալիօն եւ տեղացիների աֆրիկական բաւալիօն մի մասը: Կարեւոր դէպքում կուղարկվեն նաեւ նոր օգնական զօրքեր:

ԿՍՍԱՆՍՍԱ: Հոկտեմբերի 6-ին տեղի ունեցաւ Տուլայի եւ Սուլինի մէջտեղում փորձած Դոնայի ջրանցքի հանդիսաւոր բացումը ըստ միանական թափափառանքի ներկայութեամբ:

ԵՐՈՒՍԱՂԷՄ: Պաշտօնի ամբողջ ծովագրի վրա առնամանակ է տաւորեայ կարանտին, ինչպէս նաեւ Եւրոպայում Երուսաղէմից եկողների համար Երուսաղէմի եւ Եւրոպայի միջեւ երկաթուղային հաղորդակցութիւնը դադարեցրած է: Պատի ուղարկումը առ այժմ կատարվում է կապերով:

ՍՕՅԻՍԱ: Պատգամաւորների ժողովը հրաւիրված է ժողովելու հոկտեմբերի 15-ին: Հոկտեմբերի 6-ին Սօֆիայում, Ֆրիւպօպօլում, Սիւլիւսում, Բազալում եւ ուրիշ քաղաքներում տեղի ունեցան բազմամարդ միտինգներ: Ընեռնված վճիռները հրաւիրում են կառավարութեանը եռանդուն կերպով պահանջել Բեռլինի դաշնագրի 23-րդ յօդուածի գործադրութիւնը:

ԵՐՈՒՍԱ: Գ. Պոլսից հաղորդում են, որ երկու ծառայողներ «Dette Publique»-ում սպանված են Սէրէսի շրջանում:

ՀՈՒՆՈՒՆ: Սահմանադրային վեճը Ալթրի եւ Մարոկկայի մէջ ֆեցի վերաբերմամբ կարգաւորված է: Ֆրանսիան պահպանեց զբաւած շրջանը: Սուլթանը հրաժարվեց զինելուց արտօնալ մարտազինքի հարցը սահմանադրի մաքսաներում:

ՀՈՒՆՈՒՆ: Սեպտեմբերի 21-ին Սվալն երկու անգամ ընդհարում ունեցաւ մոլլայի ոյժերի հետ: Մուղուգայի մօտ մոլլան յետ մղվեց: Անդրադիւնից սպանվեցին եւ վիրավորվեցին 4 ֆիլիսէր եւ 150 զինուորական: Սվալն վերադարձաւ Բոզոտա եւ սպանում է օգնական զօրքերի: Մոլլայի մօտ եւս օգնական ոյժեր են զոհուում:

ՍՕՅԻՍԱ: Ապստամբութեան մասին տալիս լուրերը վկայում են, որ ժողովրդի մասնակցութիւնը ուժեղանում է: Լէշօյի եւ Լօգօդալի մօտ, Զուլայիան կազմում, ապստամբները յաղթեցին թիւրքերին: Ապստամբները ամբողջապէս Ստրուտի երկու ափերում գտնվող կիրճերում: Հաղորդակցութիւնը Զուլայի եւ վրայէթի միացեալ կազմների մէջ դեռ եւս չէ վերականգնված: Ա. ստեղի լրագրիները տպագրում են ընդհարումների երկար ցանկեր, որոնց մէջ յաղթող են հանդիսացել ապստամբական զօրաբաժինները: Բացի զենքերից մօնչիկից, զնդապետ ծանկովից եւ փոխ-զնդապետ Նիկօլօյից, ապստամբութեանը մասնակցում են մակեդոնացի օֆիցերներ եւ 15 ունեւէր-օֆիցերներ:

ՊԵՏԵՐՈՒՐԳ: Գ. Պոլսի զեւսական տան առաջին թարգման Մաքսիմով նշանակված է զիւլյումատական գործակալ եւ ընդհանուր հիւպատոս Եդիպտոսում: Երկրագործութեան միջնաբեր վերադարձաւ: Հաղորդակցութեան ճանապարհները միմիատրութիւնը մշակել է շրջաններում նոր շտապների մի օրինադիտ:

ԽՍՀՄ-ԲՈՒՐԳ: ԱԼԷՔԱՆԴՐ ԲԱՆԻՍԱՐ
Հրատարակչի ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՍԱԶԱ ՄԷԼԻԲ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՏԱՍՏՈՒ
ՏՄԱՆՈՒՐ
ԱՌՆԻՏՈՒՐ

ՅՂԲ. Գ. ԵՐ. Ս.

ՓՈՒՐՈՆԵՆՆԵՐ ՏՆԱԿԱՐԱՆԵՐ

Ս կը կարգաւոր. Անդրկովկ. երկաթուղի. Պատկերների հասցէ՝ Թիֆլիս, Սերգեյեւի-կայա ք. Ն. 11. Կապագրի ուղարկելու է ձգնապատ:

ԹԻՖԼԻՍԻ ԱԶՆԻԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Տէլեֆոն № 617

Այսօր, չորեքշաբթի, հոկտեմբերի 9-ին, խորհրդի ռուսաց օպերային արտասանները կը ներկայացնեն

ԲԻԳՕԼԵՏՕ
օպերա 4 գործող. երաժշտութիւն Վերդի
Առաջին դէրուտի համար կը ներկայացնեն՝
Ջիլլի դերը՝ տ. Օլգինա, Հէրցօր դերը՝ պ. Դնէպրովսկի, Սպարաֆուչիէի դերը՝ պ. Տօմա-չիլի:

Մասնակցում են. տ.տ. Օլգինա, Կարամզի-նա-ժուկովսկայա, Սկորուպսկայա, Գրինչենկօ, պ.պ. Դնէպրովսկի, Պօլեւանօյ, Սերգեյեւ, Տօմաչիլի, Պէլցօյ, Պետրով, Սկօրօզին եւ այլն:

Կապէլմէյստէր Լ. Պ. Շտէյնբէրգ:
Սկիզբը երեկոյեան ժամի 8-ին:

Կատան բաց է տմեն օր, առաւօտեան ժամի 10-ից մինչեւ 3-ը եւ երեկոյեան 6-ից մինչեւ ներկայացման վերջը:

Վաղը, հինգշաբթի, հոկտեմբերի 10-ին, Թիֆլիսի Կրուժոկում կը ներկայացնեն ՊԻԿՈՒԱՅԵԱՆ ԴԱՄԱՆ պերան: Բաւլի դերը կը կատարէ Ա. Գ. Բօնաչի:

Ուրախ, հոկտեմբերի 11-ին, Վրաց Ազնուականութեան թատրոնում «ՆՈՒԳԵՆՕՏԵՆԻ» օպերան: Բաւլի դերը կը կատարէ Ա. Գ. Բօնաչի:

Գեղարուեստական մասի կառավարիչ Ի. Փիթօպ:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԽԵՂՃԵՐԸ

պատմաւածքների ժողովածուն, մօտ 400 երես, ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Ե ԵՒ ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄԵՆԷ:

Գինն է 1 ռուբլի
Ճանապարհաւորում 1 ռ. 20 կօպէկ:

Ճանկացողները այժմանից կարող են դիմել «Մուրճի» խմբագրատուն՝ հեղինակին. Тиф-лисе, редакция „Мурч“.

3—10

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սիրիրայի հայ ժողովրդին հովուե-
լու համար հարկաւոր է
ԿԱՄ ՔԱՀԱՆԱՅԱՑՈՒ.

ուստի ցանկացողները թող շտապեն շուտով յայտնելու Աստրախանի հայոց կօնստաբիլային իրանց յօժարութիւնը կարեւոր վկայականների հետ:

Անդամ կօնստաբիլային՝
Յարութիւն քահ. Եւդուրեան

4—6

КОМУ НУЖНЫ ДЕНЬГИ
Могут заработать от 50 до 200 руб. за месяц
3. Агенция услуги. Иллюстр. каталог
Металлические и другие изделия
за 1 руб. контора фабрики № 54. НОВИКАТО, Горьковская, 36. СПб. пересылка катал. за 2 ф.

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՕՐ. Ս. ՇԵՐՄԵՋԱՆԵԱՆ

Շտրունակում է հիւանդների ընդհանրութիւնը:
Առաւօտեան ժամը 9—2
Երեկոյեան ժամը 5—7

(Կ. Կ.) 13—105

Իշխանութեան Թոյլտուութեամբ բացված է այս
Հոկտեմբերի 8-ին

ՆՈՐ ՏԱՄԵՆԻՉՈՐՍԵՐՈՐԻ

ԴԵՂԱՏՈՒՆ

Պրովիզոր Նիկոլայ Իվանովիչ ԲԱՅԻՐՈՎԻ
Պէսկովսկայա փողոցի վրա, № 26 տանը:

3—10

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պատիւ սենեկը հաղորդել պ.պ. վաճառական-
ներին, որ բացի մեր սեփական առեւտրական
գործերից, ընդունում ենք յանձնարարութեամբ
եւ կօմիսիօններով գործեր. ապրանքները
տեղափոխել Շուշու, Եւլախ, Ռուսաստան
կամ Պարսկաստան: Պայմանների մասին կարելի
է իմանալ նամակով: Հասցէ՝ Եւլախ կամ Սյու-
ша, Комиссионная контора Бр. Курбановы
и Латифъ Гаджиевъ.

Կովկ. յօր. ցուրտանշէտում արժանացած է
ուշիայ մէջալի

„ԱՇԽԱՏԱՆԻՔ“

ընկերութիւնը ընդունում է պաղտաւ պա-
տուաւածած տունների պատուէրներ:

Դիմել. Լազօրեւ, Կ. Աֆրիկաներին:

Տունների մանրամասն ցուցակն ուղարկվում է
ձրի:

14—24

ՏԱԳՐԱՎՈՒՄ Ե ԵՒ ԴԵԿՏԵՐԱՐՈՒՄ 19-ԻՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄԵՆԷ
Լ է Օ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Առաջին հատոր
(մօտ 460—480 երես, 15 պատկերով)

Ամբողջ գործը, որ գրական-կենսագրական մի մանրամասն տեսութիւն է, բաղկացած կը լինի
ԵՐԵՒ հատորից, իւրաքանչիւրը մօտ 500 երես, զարդարված ԲԱՉԻՍԻԻ ՊԵՏԵՐՆԵՐՈՎ (կը
լինեն «Մշակի» աչքի ընկնող աշխատակիցների պատկերները):

Առաջին հատորը խաղկացած է երկու մասից. I) Արժեքների տեսիլ, II) Գրեթէ
Արժեքներ ուսանողական տարիները (գրական գործունէութիւն մինչեւ «Մշակը»): Երկրորդ
եւ երրորդ հատորները նուիրված են «Մշակի» շրջանին: Երկրորդ հատորը լոյս կը տեսնէ
1903 թ. փետրվարին:

Մաքուր տպագրութիւն, լաւ թղթի վրա: Գրքի չափը տպում է Վենետիկի Միթրա-
րեան տպարանում եւ ներկայացնում է յատուկ պատուիրված գունաւոր նկար:

ԲԱՅՎԱՍԷ ԲԱՅԱՆԻ ՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Բաժանորդագրին է երեք հատորի համար ԵՐԵՒ ՐՈՒՐԼԻ, ճանապարհաւորումով 20 ռու-
բլի: Կարելի է վճարել եւ մաս-մաս, այն է. 2 ռուբլի բաժանորդ գրվելու, իսկ մնացածը
երկրորդ հատորը լոյս տեսնելուց յետոյ:

Կամենայով հնարաւորութիւն տալ ցանկացողներին ունենալ գրքերը ԿԱՉՄԵՐԻ մէջ, մենք
առաջարկում ենք ԳԵՂԵՍԻԿ, ՃԱՀԱԿԱՆՈՐ կազմելու Գինը նշանակում ենք առանց մեր կողմից
որ եւ յաւելումի, այն է ՄԻ ՐՈՒՐԼԻ երեք կազմի համար: Դրոյ քաղաքներից կազմած օր-
նականներին բաժանորդ գրվողները պէտք է աւելացնեն ճանապարհաւորում 20 կօպէկ՝ պօստային
փաթեթի համար:

Հատորները առանձին-առանձին չեն ծախվի: Բոլոր երեք հատորները լոյս տեսնելուց յե-
տոյ, դիմել կը բարձրացնվի Վերադիւր վճարով բաժանորդագրին չէ ընդունվում:

Թիֆլիսում բաժանորդ գրվել կարելի է. 1) Հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը եւ
2) «Դուռնաբաններ» գրաւթառանցքում, Լօրիս-Մէլիքեան փողոց:

Օտար քաղաքները դիմում են. Тифлисе, Редакция „Мшакъ“:

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ГРАММОФОНЪ МОНАРХЪ

Թիֆլիս, Գրովիցի, տուն Ա-
պրովսկի, № 7.
Բերկուցի, հեղափոխութեան
Հասցէ՝ Թիֆլիս, Գր-
աւթառանցք, Լօրիս-Մէլիքեան փողոց.
ՄՈՒՐՈՒՄ. Երեւ.

Ամենակատարելագործված գրամոֆոնների մեծ ընտրութիւն:
Նշանաւոր եւ յայտնի ռուս, վրացի, հայ, թաթար, պարսիկ, թուրք, լեհ,
ֆրանսիացի, անգլիացի, իտալացի, գերմանացի եւ այլ երգչիչնե-
րի պատանկանների անագին ընտրութիւն:
Պատանկանների ընտրութեան ժամանակ խնդրում ենք ուշադրութիւն
գարձնել մեր գործարանական կիթի վրա. «գրող հրեշտակ», ա-
ռանց որի պրակտիկաները անպայման կեղծված են:
Ընկերութեան պահեստին կից կայ եւ առանձին արհեստանոց, որտեղ կա-
րելի է զէպում գրամոֆոնները կարող են ուղղվել:
Գրամոֆոնների կանօւաւոր գործողութեան համար տրվում է երեք տար-
վայ ապահովագիր:
Ապրանքի տեղաւորումը եւ փաթեթումը կատարվում է խանութի հաշուով:
Ապարանտների ուղարկումը երկաթուղիների բոլոր կայարանները եւ քո-
պական Ռուսաստանի սահմաններում (ամառը նաեւ զէպի ջրայ-
ին ճանապարհների նաւահանգիստները) ընկերութիւնը կատա-
րում է իր հաշուով:
Պատուով ուղարկումը ընկերութիւնը յանձն է առնում՝ վճարելով միայն
ծախար կէսը:
Կիրակի օրերը խանութը փակ է. միւս օրերը բաց է առաւօտեան 8 1/2
ժամից սկսած մինչեւ երեկոյեան 9 ժամը:
Պահանջները պատկերազարդ կատարվում:
Մեծ քանակութեամբ առնողներին ուղարկվում են նոր պրէյսկուրանտնե-
րը ըստ պահանջման:

3—10

ՎԱՃԱՎՈՒՄ Ե ԵՒ

ԻՒՐԻՅ ՎԵՍԵԼՈՎՍԿԻՆ

հետեւեալ աշխատութիւնները (սակաւաթիւ օրինակներ)

1) «ЛИТЕРАТУРНЫЕ ОЧЕРКИ», որի մէջ գտնվում են, ի միջի այլոց, նաեւ հայկական
կեանքի եւ գրականութեան վերաբերեալ հետեւեալ յօդուածները. «Байронъ и мхитаристовъ»,
«Грибоедовъ и армяне», «Поэзия Пушкина въ армянской литературѣ», «Мкртичъ Бешикташлянъ»,
его литературная и общественная дѣятельность», «Древнѣйшій періодъ исторіи армянскаго театра»,
«Женская доля въ изображеніи армянскихъ литераторовъ»): Գինն է 2 ռուբլի:

2) «АРМЯНСКІЙ ПОЭТЪ С. ШАХЪ-АЗИЗЪ», ընտաղատական էտիւդ. Բանաստեղծի լո-
ւտար պատկերով եւ նրա բազմաթիւ ոտանաւորներով եւ ՀԼԵՆԻՍԻ վիշտը պօէմայից առնված
հատուածներով, ռուս ընտանեկանների թարգմանութեամբ: Գինն է 1 ռուբլի:
Ցանկացողները դիմում են հեղինակին այս հասցեով. Москва, Б. Молчановка, Криво-Ни-
кольскій, № 7—9, Юрію (Георгію) Алексѣевичу Веселовскому.

3—5

„Փ. Ն. ՓՐԻԳՕՆԵԱՆ“

ԿՈՆՖԵՏԻ ԵՒ ՇՈԿՈԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէսում մեր պատրաստած աղաւթները աբ-
խանացիները Կովկասում արդիւնաբերութեամբ:

ՄԻԱԿ ՄԵԾ ԱՐԾԱԹԵԱՅ ՄԵԴԱԼԻ

Առանձնապէս յանձնարարում ենք. ՌԱՀԱԹ-ԼՈՅՈՒՄ, Կարմէլ ՎԻԲԻԼԷՄԵԱՅԱՆ եւ առաւ-
րակ բարձր յատկութեան կարամէյներ մրցեղէնում:

Գործարանում աշխատում են մայրաքաղաքի նշանաւոր վարպետներ:
Պատուէրներով դիմել. Թիֆլիս, Գալովսկայա փողոց, սեփական տուն
Գործարանի հեղափոխ Ն. 362, գործարանական խանութիւնը № 772:

69—100